76 Ես հոգնած և բեռնավորված,

1. Ես հոգնած և բեռնավորված,
Տե՛ր, հիմա Քեզ եմ դիմում
Եվ, Քեզանով միայն փրկված,
Հանգստություն եմ գտնում:

Ո՛վ Հիսուս, պիտ գամ ես Քեզ մոտ,
Որ տաս ինձ խաղաղություն,
Ո՛վ Հիսուս, ես Քեզ եմ կարոտ,
Դու տաս ինձ հանգստություն:

2. Ամ՛ս, ո՛վ Քրիստոս, ո՛վ իմ Փրկիչ,
Ես խնդրում եմ Քեզանից,
Դու պահպանի՛ր, որ փորձիչը
Չշեղի ինձ Քո ճամփից:

3. Տե՛ր, օգնիր ինձ, միշտ մոտ եղիր
Այս երկրային կյանքի մեջ
Եվ իմ սրտում, ո՛վ Տեր, պահիր
Քո լույսը վառ և անշեջ:

4. Քո հայրական գոգում հավետ
Հոգիս գտնում է հանգիստ,
Այստեղ, ամեն փորձանքից ետ,
Դրախտում կհանգչեմ միշտ: